ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

27 **ապրիլի** 2018 **թվական**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3/3
ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 3-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 3-ՐԴ ՆԻՍՏԻ

Նիստին մասնակցում էր Երևանի ավագանու 49 անդամ:

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետ Տ. Մարգարյանը:

Երևանի ավագանու նիստին հրավիրված էին՝ Երևանի քաղաքապետի տեղակալները, քաղաքապետի գլխավոր խորհրդականը, քաղաքապետի խորհրդականները, Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը, աշխատակազմի քարտուղարի տեղակալը, աշխատակազմի անշարժ գույքի կառավարման, իրավաբանական, կազմակերպական, տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչությունների պետերը:

Հաշվի առնելով, որ Երևանի ավագանու «ԵԼՔ» և «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամները բացակայում են, նախքան օրակարգի նախագիծը հաստատելը, համաձայն Երևանի ավագանու կանոնակարգի 100-րդ կետի՝ ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովի նոր անդամ նշանակվեց Երևանի ավագանու «Հանրապետական կուսակցություն» խմբակցության անդամ Արմեն Երեմյանը:

Երևանի քաղաքապետ Տ. Մարգարյանը ներկայացրեց Երևանի ավագանու 2018 թվականի ապրիլի 27-ի նիստի օրակարգի նախագիծը.

1. Երևանի ավագանու 3-րդ նստաշրջանի 3-րդ նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:
3. Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին:
4. «Երևանի Հմայակ Խաչատրյանի անվան մանկապատանեկան համալիր մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը վերակազմակերպելու, «Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտե» իրավաբանական անձանց միությանը բաժնետոմսեր նվիրելու մասին:
5. Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի հունիսի 15-ի N11-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
6. Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 26-ի N93-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

1. **ԼՍԵՑԻՆ -** Երևանի ավագանու 3-րդ նստաշրջանի 3-րդ նիստի օրակարգը հաստատելու մասին:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 46 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 46, դեմ՝ 0 , ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն

2. **ԼՍԵՑԻՆ** - Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Արսեն Ամյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Հ.Թոքմաջյանը տեղեկացրեց, որ «Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

Քննարկվող նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթի համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ արտահայտվեց.

1. Մարինա Խաչատրյան-Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Ֆուչիկի փողոցի հ.27 հասցեում գտնվող 910.0 քմ մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը «արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության» հողերի կատեգորիայից փոխադրել «բնակավայրերի» հողերի կատեգորիա:

2.Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում, օրենսդրությամբ սահմանված կարգով, տեղեկացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեին և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեին՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենները:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 49 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝46, դեմ՝3, ձեռնպահ՝0

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

3. **ԼՍԵՑԻՆ** - Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Արսեն Ամյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Հ.Թոքմաջյանը տեղեկացրեց, որ «Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

Քննարկվող նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթի համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ արտահայտվեց.

1. Մարինա Խաչատրյան-Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ

Արտահերթ ելույթով հանդես եկավ Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության ղեկավար Զարուհի Փոստանջյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Համաձայնություն տալ՝ «Էլիտ Գրուպ» փակ բաժնետիրական ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող և տարածագնահատման 4-րդ գոտում գտնվող

Արաբկիր հ.41 փողոցի հ.31/1 հասցեի հողամասից 50.52 քմ մակերեսով հողամասը, Արաբկիր հ.41 փողոցի հ.31 հասցեի հողամասից 101.66քմ և Հյուսիսային ճառագայթ հ.26 հասցեի հողամասից 160.0քմ մակերեսով հողամասերը (անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման հ.հ.2760049, 2760048, 2176837 վկայականներ) Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող՝ հարակից տարածքում և տարածագնահատման 4-րդ գոտում գտնվող 312.18քմ մակերեսով հողամասի հետ փոխանակելուն:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 49 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝46, դեմ՝3, ձեռնպահ՝0

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

4. **ԼՍԵՑԻՆ** - «Երևանի Հմայակ Խաչատրյանի անվան մանկապատանեկան համալիր մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը վերակազմակերպելու, «Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտե» իրավաբանական անձանց միությանը բաժնետոմսեր նվիրելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Արսեն Ամյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Գ.Մինասյանը տեղեկացրեց, որ ««Երևանի Հմայակ Խաչատրյանի անվան մանկապատանեկան համալիր մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը վերակազմակերպելու, «Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտե» իրավաբանական անձանց միությանը բաժնետոմսեր նվիրելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

Քննարկվող նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար գրանցվել են ավագանու 2 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ արտահայտվեցին.

1. Սոննա Աղեկյան- Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ
2. Մարինա Խաչատրյան-Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ

Արտահերթ ելույթով հանդես եկավ Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության ղեկավար Զարուհի Փոստանջյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. «Երևանի Հմայակ Խաչատրյանի անվան մանկապատանեկան համալիր մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը վերակազմավորման ձևով վերակազմակերպել 100 տոկոս Երևան համայնքի մասնակցությամբ «Երևանի Հմայակ Խաչատրյանի անվան մանկապատանեկան համալիր մարզադպրոց» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ նաև ընկերություն):

2. Հաստատել ընկերության կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

3. Սահմանել, որ՝

1) «Երևանի Հմայակ Խաչատրյանի անվան մանկապատանեկան համալիր մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության իրավահաջորդը «Երևանի Հմայակ Խաչատրյանի անվան մանկապատանեկան համալիր մարզադպրոց» փակ բաժնետիրական ընկերությունն է, և վերջինիս են անցնում վերակազմակերպված իրավաբանական անձի իրավունքներն ու պարտականությունները՝ փոխանցման ակտին համապատասխան.

2) ընկերության կանոնադրական կապիտալը 100 000 դրամ է, որը համապատասխանում է 10 հատ հասարակ (սովորական) բաժնետոմսի, յուրաքանչյուրը՝ 10 000 դրամ անվանական արժեքով.

3) վերակազմակերպման հետ կապված ծախսերը կատարվելու են «Երևանի Հմայակ Խաչատրյանի անվան մանկապատանեկան համալիր մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության միջոցների հաշվին:

4. Սույն որոշման 1-ին կետում նշված կազմակերպության վերակազմակերպման արդյունքում ստեղծված «Երևանի Հմայակ Խաչատրյանի անվան մանկապատանեկան համալիր մարզադպրոց» փակ բաժնետիրական ընկերությունը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից գրանցվելուց հետո, ընկերության 100 տոկոս Երևանի համայնքային սեփականություն հանդիսացող 100 000 ՀՀ դրամ ընդհանուր անվանական արժեքով 10 հատ հասարակ բաժնետոմսերը նվիրել «Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտե» իրավաբանական անձանց միությանը:

5. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել «Երևանի Հմայակ Խաչատրյանի անվան մանկապատանեկան համալիր մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության վերակազմակերպման գործընթացի իրականացումը, ինչպես նաև «Երևանի Հմայակ Խաչատրյանի անվան մանկապատանեկան համալիր մարզադպրոց» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի հանձնման-ընդունման կատարումը՝ կնքելով բաժնետոմսերի նվիրատվության պայմանագիր:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 49 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝46, դեմ՝3, ձեռնպահ՝0

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

5. **ԼՍԵՑԻՆ** - Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի հունիսի 15-ի N11-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Արսեն Ամյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Գ. Մինասյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի հունիսի 15-ի N11-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

Քննարկվող նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար գրանցվել են ավագանու 3 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ արտահայտվեցին.

1. Մարինա Խաչատրյան-Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ

2. Սոննա Աղեկյան- Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ

3.Գրիգոր Մինասյան-Երևանի ավագանու «Հանրապետական կուսակցություն» խմբակցության անդամ

Արտահերթ ելույթով հանդես եկավ Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության ղեկավար Զարուհի Փոստանջյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի հունիսի 15-ի «Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կանոնադրությունը հաստատելու, Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի N 3-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու, 2009 թվականի սեպտեմբերի 23-ի N 2/2-7-Ա և 2012 թվականի հոկտեմբերի 31-ի N 522-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 11-Ն որոշման N 4 հավելվածի 16-րդ, 20-րդ և 21-րդ կետերում «սպասարկող» բառն իր հոլովաձևերով փոխարինել «սատարող» բառով՝ համապատասխան հոլովաձևերով:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 49 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝46, դեմ՝3, ձեռնպահ՝0

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

6. **ԼՍԵՑԻՆ -** Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 26-ի N93-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Արսեն Ամյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Ն. Նահապետյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 26-ի N93-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն։

Քննարկվող նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել։

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար գրանցվել են ավագանու 2 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ արտահայտվեցին.

1. Մարինա Խաչատրյան-Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ
2. Սոնա Աղեկյան- Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ

Արտահերթ ելույթով հանդես եկավ Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության ղեկավար Զարուհի Փոստանջյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 26-ի «Երևան քաղաքի 2017 թվականի բյուջեի մասին» N 93-Ն որոշմամբ հաստատված.

1) եկամուտների գումարը ավելացնել 2,009,620.0 հազար դրամով,

2) ծախսերի գումարը ավելացնել 2,191,152.6 հազար դրամով,

3) դեֆիցիտի գումարը ավելացնել 181,532.6 հազար դրամով:

2. Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 26-ի «Երևան քաղաքի 2018 թվականի բյուջեի մասին» N93-Ն որոշմամբ հաստատված NN 1, 2, 3, 4, 5, 6 և 7 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն սույն որոշման համապատասխանաբար NN1-7 հավելվածների։

3. Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 26-ի «Երևան քաղաքի 2018 թվականի բյուջեի մասին» N93-Ն որոշման 2-րդ կետի «5,684,507.1 հազար դրամ» բառերը փոխարինել «7,139,507.1 հազար դրամ» բառերով:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 49 անդամ
ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝46, դեմ՝3, ձեռնպահ՝0

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

Երևանի քաղաքապետ Տ. Մարգարյանի առաջարկությամբ որոշվեց Երևանի ավագանու հերթական նիստը գումարել 2018 թվականի մայիսի 30-ին, ժամը 11.00-ին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Կազմեց՝
Ն. Ղուկասյան